20.01.2021թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 000860/05
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, ուսումնասիրելով 20.01.2021 թվականի թիվ 860 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 860 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

«ԻՌՄԱՌ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արթուր Ղազարյանը (ՀՎՀՀ՝ 00877839, հասցե՝ ՀՀ ք.Երևան, Մոլդովական 50/1 55) ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում հայտնի է դարձել, որ «ԻՌՄԱՌ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արթուր Ղազարյանը 2020թ-ի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկը ներկայացրել է ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ուշ՝ 21.12.2020թ-ին և հաշվարկից առաջացած վճարման ենթակա գումարը կազմել է ընդամենը 11.500 ՀՀ դրամ, որը նույն օր վճարել է:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ 2020թ-ի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկից առաջացած վճարման ենթակա գումարը կազմել է ընդամենը 11.500 ՀՀ դրամ և վարչական իրավախախտումը ունի նվազ նշանակություն, ուստի ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 21-րդ հոդվածով, 244[2], 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Արթուր Ղազարյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:

2. Արթուր Ղազարյանի վերաբերյալ հարուցված թիվ 860 վարչական վարույթը կարճել:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն գործողության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: